## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք, ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Շատին, 1փող. 1, Հեռ. (0281) 99282 , shatin.vayotsdzor@mta.gov.am

N 171
*30 մարտ 2018թ.*

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն մարզպետ

Ի պատասխան Ձեր 12/01/2018թ. N01/08/180-18 գրության Ձեզ ենք ներկայացնում Եղեգիս համայնքի ավագանու կողմից 19-ը մարտի 2018թ. թիվ 3 արտահերթ նիստով հաստատված տարեկան աշխատանքային պլանը /ՏԱՊ/:

Առդիր՝ էլ. նյութեր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Դանիելյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am.էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2018 թվականի N25 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել եղեգիս համայնքի 2018թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 1

Բադալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ բացակա

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա բացակա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան [illegible]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

**Համայնքի 2018 թվականի**

# ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

**Կազմել է՝ համայնքի ղեկավար Ա. Ստեփանյան**

**Հաստատվել է՝ համայնքի ավագանու 19-ը մարտի
թիվ 3 արտահերթ նիստում՝ N 25 Ա որոշմամբ**

Համայնքի ղեկավար՝ Ա. Ստեփանյան

**2018թ.**

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ..... 4
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ..... 8
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ ..... 18
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ ..... 25
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ ..... 29

# Ներածություն

ՏԱՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները։[1]

Եղեգիս համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- ➢ համակարգելու ՏԻՄ-երի տվյալ տարվա անելիքները,
- ➢ սահմանելու սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատելու համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառելու համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկելու համախառն ռեսուրսները և բացահայտելու պակասուրդը (դեֆիցիտը),
- ➢ համախմբելու համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- ➢ շաղկապելու նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- ➢ որոշակիացնելու նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակելու տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը։

Եղեգիս համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

**1-ին բաժնում** սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները։

**2-րդ բաժնում** ներկայացվում է համայնքի 2018 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)։

**3-րդ բաժնում** ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը։

**4-րդ բաժնում** ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը։

**5-րդ բաժնում** ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը։

---

1 «Մեթոդական ուղեցույց համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման», ԳՄՀԸ, ՀՖՄ, 2017

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

**Համայնքի տեսլականը՝**

Եղեգիսը զարգացման մեծ պոտենցիալ ունեցող համայնք է, ուր բնակչությանը մատուցվելու են բարձրակարգ հանրային ծառայություններ։

**Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները**

| Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
|---|---|---|
| Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%) | 25 | 15 |
| Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%) | 32 | 40 |
| Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ) | 6392 | 6392 |

**Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները**

| Ոլորտային նպատակ | Վերջնական արդյունքի | | |
|---|---|---|---|
| | Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
| **Ոլորտ 1. Ընդհանուր** | | | |
| Ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների և ՔԿԱԳ-ի արդյունավետ աշխատանքը | Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, % | 70 | 90 |
| | Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների կազմում, % | 32 | 40 |
| **Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում** | | | |
| 2018 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | - | - | - |
| **Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում** | | | |
| 2018 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն | - | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն** | | | |
| Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը | Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, % | 40 | 50 |
| **Ոլորտ 5. Հողօգտագործում** | | | |
| 2018 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | - | - | - |
| **Ոլորտ 6. Տրանսպորտ** | | | |
| Բարելավել համայնքային ենթակայության ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը | Բարեկարգ ներհամայնքային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, % | 10 | 30 |
| **Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ** | | | |
| 2018 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | - | - | - |
| **Ոլորտ 8. Կրթություն** | | | |
| Ապահովել համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցումը | Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, % | 5 | 10 |
| | Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, % | 70 | 90 |
| | Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, % | - | - |
| **Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | | | |
| Համայնքում ունենալ ակտիվ մշակութային կյանք | Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակավայրերի բնակիչներին, % | 40 | 60 |
| | Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը , % | 2 | 5 |

| | | | |
|---|---|---|---|
| | Համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռն դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, % | 10 | 20 |
| **Ոլորտ 10. Առողջապահություն** | | | |
| 2018 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | - | - | - |
| **Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ** | | | |
| Ապահովել սպորտի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցումը | Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների թվի կազմում, % | - | - |
| | Մատուցվող մարզական ծառայությունների մատչելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, % | - | - |
| **Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն** | | | |
| Կրճատել սոցիալապես անապահով ընտանիքների թիվը | Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, % | 75 | 80 |
| **Ոլորտ 13. Գյուղատնտեսություն** | | | |
| 2018 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | - | - | - |
| **Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա** | | | |
| 2018 թվականի ընթացքում անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն** | | | |
| Ապահովել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ | Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը (հարցումների հիման վրա), %-ով | 10 | 20 |
| **Ոլորտ 16. Զբոսաշրջություն** | | | |
| 2018 թվականի ընթացքում զբոսաշրջության | - | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն** | | | |
| 2018 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | - | - | - |

## 2. Համայնքի 2018 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3 ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | ԲԲՀ-ի բնակավայրը |
|---|---|---|---|
| Ոլորտ 1. Ընդհանուր | | | |
| 1. | Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում | 3240.0 | ընդհանուր համայնքային |
| Ընդամենը | | 3240.0 | |
| Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում | | | |
| 1. | 2018 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: | - | - |
| Ընդամենը | | - | - |
| Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում | | | |
| | 2018 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| Ընդամենը | | - | - |
| Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | | | |
| 1. | Փողոցային լուսավորության իրականացում | 13900,0 | Շատին, Հորս |
| Ընդամենը | | 13900,0 | |
| Ոլորտ 5. Հողօգտագործում | | | |
| | 2018 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| Ոլորտ 6. Տրանսպորտ | | | |
| | Ներհամայնքային ճանապարհային տնտեսության պահպանություն | 4000.0 | ընդհանուր համայնքային |
| Ընդամենը | | 4000.0 | - |
| Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ | | | |
| | 2018 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: | - | - |
| Ընդամենը | | - | - |
| Ոլորտ 8. Կրթություն | | | |
| 1. | Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում | | |
| Ընդամենը | | | - |
| Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ | | | |
| 1. | Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի բարելավում | 3400.0 | ընդհանուր համայնքային |
| Ընդամենը | | 3400.0 | - |

| | | | |
|---|---|---|---|
| **Ոլորտ 10. Առողջապահություն** | | | |
| | 2018 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ընդամենը** | | - | - |
| **Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ** | | | |
| 1. | | - | |
| **Ընդամենը** | | - | |
| **Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն** | | | |
| 1. | Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին | 2500,0 | ընդհանուր համայնքային |
| **Ընդամենը** | | **2500.0** | |
| **Ոլորտ 13. Գյուղատնտեսություն** | | | |
| . | 2018 թվականին գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ | 9800.0 | |
| | | 9800.0 | |
| **Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա** | | | |
| 1. | 2018 թվականին անասնաբուժություն և բուսասանիտարիայի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | | ընդհանուր համայնքային |
| **Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն** | | | |
| 1. | Համայնքի տարածքում աղբահանության, սանիտարական մաքրման և կանաչապատման աշխատանքների իրականացում | 9000.0 | ընդհանուր համայնքային |
| **Ընդամենը** | | **9000.0** | - |
| **Ոլորտ 16. Զբոսաշրջություն** | | | |
| 1. | 2018 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ընդամենը** | | - | - |
| **Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն** | | | |
| 1. | 2018 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ընդհանուրը** | | | - |

**Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով**

| **Հ/հ** | **Ծրագրի անվանումը** | **Ծրագրի արժեքը (հազ. դրամ)** | **ԲԲՀ-ի բնակավայրը** |
|---|---|---|---|
| **Ոլորտ 6. Տրանսպորտ** | | | |
| 1. | Ներհամայնքային ճանապարհների կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում | 4000.0 | ընդհանուր համայնքային |
| **Ընդհանուրը** | | **4000.0** | |

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

| Ամփոփ նկարագիր | Արդյունքային ցուցանիշներ | Տեղեկատվության աղբյուրներ | Պատասխանատու | Ժամկետ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|---|
| **Ոլորտ 1. Ընդհանուր** | | | | | |
| **Ոլորտային նպատակ**<br>Ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների և ՔԿԱԳ-ի արդյունավետ աշխատանքը | | **Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ**<br>✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, 99%<br>✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 50% | | | |
| [illegible] | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը | **Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ**<br>Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը, լավ | Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ | 2018թ. հունվար-դեկտեմբեր | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |
| **Միջանկյալ արդյունք 1**<br>Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը | **Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)**<br>1. Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը, 89<br>2. Աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացում, 4%<br>3. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը՝ այո<br>4. ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 5%<br>5. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը, 90%<br>6. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 5 օր | Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ | 2018թ. հունվար–դեկտեմբեր | Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն |